

8. Աշխարհի բնակչության ազգային կազմի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....
1,5 միավոր

1. Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական և մշակութային ընդհանրությունը, երբ ազգը դառնում է ավելի միասնական ու ամրակուռ, կոչվում է ազգի միաձուլում (ասիմիլացիա):
2. Ազգի բնորոշ հատկանիշներից են ծագումը, լեզվի, մշակույթի և հոգեբանական խառնվածքի ընդհանրությունները:
3. Բնակչության ազգային և կրոնական կազմերի սահմանները մշտապես համընկնում են:
4. Բնակչության ազգային և լեզվական կազմերը աշխարհի առանձին տարածաշրջաններում չեն համընկնում:
5. Ազգն ունի ազգությանը բնորոշ հատկանիշներ, սակայն սոցիալ-տնտեսական զարգացման ավելի ցածր աստիճանի վրա է, քան ազգությունը:
6. Աշխարհում խոշորագույն լեզվաընտանիքը հնդեվրոպականն է, իսկ ամենատարածված լեզուն՝ չինարենը:

9. Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....
1,5 միավոր

1. Հարավ – արևելքում գտնվում է Սավալան (Մեբելան) հրաբխային վիթխարի զանգվածը:
2. Արևելապոնտական լեռների ամենաբարձր գագաթը Ծաղկավետն է:
3. Մեծ Արարատից դեպի արևմուտք ձգվում է Հայկական Պար լեռնաշղթան:
4. Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասում վեր են խոյանում Արագածը և Գեղամա լեռնավահանը:
5. Միջնաշխարհի ցածրադիր գոգավորություններում տարածվում է լեռնաանտառային լանդշաֆտը:
6. Հյուսիսում տարածվում են Ներքին Տավրոսի լեռները:

10. Գրել նշված լեռնաշխարհների ու լեռնաշղթաների բարձր գագաթները և դրանք դասավորել հյուսիսից հարավ ճիշտ հերթականությամբ.....
2 միավոր

Եթովպական, Պոնտոս, Մեծ Կովկաս, Անդեր:

11. «Ավտոմոբիլային ընկերություն – պետություն» գույքերից ընտրել ճիշտը.....
1 միավոր

1. «Ֆիատ» – Իտալիա
2. «Պեժո» – Իսպանիա
3. «Ֆորդ» – Գերմանիա
4. «Տոյոտա» - Կորեա

12. «Ջերմոցային էֆեկտը» պայմանավորված է.....
1 միավոր

1. Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթների ինտենսիվությամբ,
2. սառցադաշտերի հալմամբ,
3. մթնոլորտի շրջանառությամբ,
4. մթնոլորտում ջրային գոլորշիների և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ: